

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՍՔԱԳԻՐ — ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Փետրուար 12

Թիւ 82 — Թ.

هائراکيداق غزنهسى

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արտասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գինովին կտակը (Ռուսահայ երգ)
Շաբարական Քրոնիկ
Յարգանք յիշատակին
Հիացում, մահացում
Մրտի փարձ
Ստեղծագործութիւն
Իմաստասիրական բառարան
Երկրագործութիւն
Թոյսթոյի կարծիք
Հարբուխին դէմ
Քիչ մը խնդուք
Հարսանիք

Թ. Լ.
Բ. Պ.
Բ. Պ.
Թ. ԼԱՊՃԻՆՃԵԱՆ
Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Ա. Լ.
Ա. Լ.
Բ. Պ.
Ս.

40 փաթա 40

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ կը ծախուի. 1. Գասրգիւղ, Արմեն եմ. 2. Չպուգնեանի Դեղարանը. — 2. Սամաքիա, Կալարանին մօտ, ծխավանառ Յարութիւն Աղա Էժէրհանեանի խանութը. — 3. Կամուրջի գլուխը, ջրավանառ Նեան աղա Օգունեանի տոլ (նախկին ջրավանառ Պօղոս աղայի խանութը). — 4. Զրաւանառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց, Ասեմեան եւ Զարդարեան գրատունները. — 6. Բոլոր լրագրավանառներուն տոլ:
Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՔԻՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ ուղղակի Տնօրէնութեանս դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Չապսիէ հասցեսի Թիւ 61

1900

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILL.

1900

RECEIVED

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILL.

1900

RECEIVED

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILL.

1900

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային Գրական եւ Քաղաքական



ԽՐԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
ԲԻՐԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Փետրուար 12

Թիւ 82 — Թ

Բարեկենդանի այս ցնծուն օրերուն՝ ուր զինին իսկ կայսիւ մը կը ցրցնէ վեարբէ՛կ սիրտերու մէջ իսկ, պատեն տնտեսկալ մ'ընէլ փորձեցինք՝ դնելով — յիւր գրական պատառ — Ռուստամայե՛րու հին մոռցուած սա երգը որուն մէջ վայրագ զինարբուի մը կսկծագին իմաստասիրութիւնը խնայած է ժողովրդական համեղ ոնով մը։ Մօտաւոր քիւով մը կը խոստանանք անոր ծայնագրութիւնն ալ արել աստանօր, որովհետեւ խօսքերուն չափ եւ աւելի՛ եղանակին մէջ կարմիր ճեղուկին բոցը ու անոր առ քա՛ծ խոհանր կայ ետքի։

Յ. Լ.

ԳԻՆՈՎԻՆ ԿՏԱԿԸ

[Սրգ]

Եղբարք, ուժից ինկած բոտակրով՝ [Goulle]

Էլ աւելի բան չեմ կարող խմել.

Կարելի է որ մեռնիմ շուտով

Ուզում եմ կտակս ձեզ յայտնել.

Ճաշուցն առաջ,

Իսկ այնուհետեւ հի՛ հի՛ հի՛...

Ինձի այն զինեառներ Թաղեցէք

Ուր շատ սնգամ ես յարթել եմ,

Գերեզմանս ա՛յնպէս փորեցէք

Որ տակառին տակը պառկեմ։

[Ն.Ն.]

Ռոններս դէպի պատը ուղղուած

Գլուխս լինի լիւլին տակ.

Երկու ձեռքս ունենամ բռնած

Ահագին զինուով լի բաժակ։

[Ն.Ն.]

Մահուան հանդէս մի՛ կտտարէք

Պատարագով, զանգակներով,

Դիակիս վրայ զինի ճափեցէք

Բաժակները չոխկացնելով։

[Ն.Ն.]

Դերեզմանիս վրայ քար չ'դնէք,

Տակառն արձա՛ն է ինձ արժան,

Վրան չորս խօսք միայն գրեցէք

«Յարքեցողի է սա տապան»։

[Ն.Ն.]

Քանի հոգիս բերնումս է

Տուէք եղբարք ինձ մի շիշ զինի.

Ամօ՛թ է որ մահու հրեշտակը

Դայ եւ զիս յարբած չի տեսնէ.

[Ն.Ն.]

Իսկ թէ կտակս դուք մոռանաք,

Խռո՛վ կենայ ձեզ միշտ Բագոս,

Մարաւ՝ կտոր մը զինեոյ կարօտ մնաք,

Կուլ տայ ձեզ դժգոյքի մեծ փոս.



ՅԱՐԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ



ԻԼԻԿԻՈՑ Կաթողիկոսական ընտրութեան խնդրոյնստացած վերջին երեւոյթն, — ոմանց համար ակնունելի, այլց համար անակնունելի, — հանրային ուշադրութիւնը միշտ լարուած պահելու հանգամանքն ունի: Դատական նախարարութեան վերջին պաշտօնագրին հետեւանքը սա եղաւ որ կայս. Կառավարութեան ներկայացուցիչ Պէհա պէյ շարթուս սկիզբն իսկ Ատանա ուղեւորեցաւ, մինչ Ազգ. Պատրիարքարանը տակաւին կը տատամսէր իր պաշտօնական հեռագիրն ուղղելու խապայեան Սրբազանի, որ ինքն ալ իր մեկնումը փութացնէ յԱտանա: Ինչո՞ւ համար այս յապաղում, ինչո՞ւ համար էն կարեւոր պարագաներու մէջ, էն անհրաժեշտ հարկերու առջեւ կը վարանինք եւ չենք գիտեր կտրուկ ընթացք մը բռնել: Ընտ մեզ Սահակ Սրբազան ցարդ Ատանա գտնուելու էր, ցարդ իրազեկ լինելու էր իրեն տրուած հրահանգներուն, մինչդեռ Ն. Սրբազնութիւն մինչեւ հիմակ ոչ միայն չէ մեկնած երուսաղէմէ, այլ եւ իրազեկ իսկ չէ իր պաշտօնին բնութեան, մանաւանդ որ երուսաղէմի Ս. Պատրիարք Հօր հետ ի՞նքն ալ կանխաւ փափաք յայտնած էր իրազեկ ըլլալ իրեն տրուելիք հրահանգներուն, Ատանա ուղեւորելէ առաջ: Ս. Պատրիարք Հայրն հաղիւ երկու օր առաջ հեռագրած է երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազանի, խնդրելով արտօնել զՏ. Խապայեան Սրբազան, որպէսզի փութայ յԱտանա, ուր պիտի գտնէ

Պատրիարքարանի կողմէ տրուած վերջնական հրահանգները, ուրիշ մէկ քանի պաշտօնագրերու հետ: Դեռ յայտնի չէ թէ Տ. Խապայեան Սրբազան, մինչեւ սոյն տողերուն գրուած պահուն, ճամբայ ելած է թէ ոչ. սա ստոյգ է թէ Պատրիարքարանի կողմէ պատրաստուած պաշտօնագրերն այս օրուան թղթատարով հաղիւ պիտի ղրկուին Մէրսին, Սահակ Սրբազանի հասցէին: Այս պաշտօնագրերուն մէջ կը գտնուին Ատանայի ու Հալէպի կուսակալներուն ուղղեալ յանձնարարագրեր, հանգուցեալ Մկրտիչ Կաթողիկոսի ընտրութեան հրահանգն, ինչպէս նաեւ յառաջիկայ նոր ընտրութեան հրահանգն, որ աշխատալից բանակցութեանց նիւթ եղած էր:

Եթէ Սահակ Սրբազան, Ս. Պատրիարք Հօր հեռագիրն առնելուն պէս ճամբայ ելած է, յառաջիկայ շարթու մէջ Ատանա կը ժամանէ, եւ անմիջապէս կը ձեռնարկէ ընտրական նախապատրաստական գործողութեանց: Ընտրողական Ժողովն, որուն պիտի անդամակցին Կիլիկիոյ բոլոր թեմերն իրենց կրօնական ու աշխարհական պատուիրակներուն միջոցաւ, նախ պիտի պատրաստէ վեցանուն սրբազրելի ցանկ մը, զոր Խապայեան Սրբազան պիտի հաղորդէ Ազգ. Վարչութեան, ինչպէս Պէհա պէյ նոյնը պիտի հաղորդէ Դատական նախարարութեան: Ազգ. Վարչութիւնը, Պատրիարքարանի Կաղմական Օրէնքին համաձայն, ինչպէս պատրիարքական ընտրութեանց առթիւ կ'ընէ, ըստ քաղաքականին պիտի սրբազրէ ընտրելեաց ցանկը եւ ապա պիտի վերադարձնէ ընտրողական Ժողովին, վերջնական ընտրութիւնը կատարելու աչդ ցանկին վրայ:

Ուրեմն ընտրական գործողութիւնը այժմէն սկսած են կամ սկսուելու վրայ են, եւ հիմա բնականաբար ամենուն ուշադրութիւնը դարձած է սա շահեկան խնդրոյ վրայ թէ ո՞ր պիտի ըլլան վե-

ցանուն սրբագրելի ցանկին ընտրելիներն։ Ո՛չ մարգարէ ենք որ գուշակենք հաւանական ընտրելիներու անունները, ո՛չ ալ կ'ուզենք ընտրելիներ թելագորել, վասն զի մեր դաւանութիւնը սա՛ է թէ ընտրողական ժողով մը, որ անհուն պատասխանատուութիւն ունի, պէտք չէ որ այս կամ այն կողմէ ներշնչուի, այլ Ազգին, Եկեղեցւոյն ու Տէրութեան լաւ հասկցումով իրական շահերն ունենայ իրեն ներշնչում, իրեն առաջնորդ, ժամանակին փափկութիւնն ու ողջմտութիւնն ինկատ առնէ, եւ չղափարէ իրեն հայեցութեամբ կատարէ այնպիսի ընտրութիւն մը որ գոհութիւն միայն պատճառէ ամէն շահակից կողմերուն ալ միանգամայն։ Եւ վստահ ենք թէ Տ. Թապալեան Սրբազան պիտի արդարացնէ իր վրայ դրուած յոյսերը, ընտրութիւնն յաջողապէս ի գլուխ հանելու համար։

* * *

Ի՞նչ կ'ըսէք, իրաւցընէ՞ սթափեր է Կրօն. Ժողովն իր թմրութենէն։ — Այո՛, չէ՛ք տեսներ կոր, եթէ մի կողմէ Կրօն. Տեսուչ մը կարգելու հետամուտ է ոգի ի բռնին, միւս կողմէ իր գործունէութեան իբրեւ ապացոյց, ձեռնարկեր է իր եռամեայ համարատուութիւնը պատրաստել գիւնադպրին ձեռամբ։ Կրնա՞նք հարցնել, արդեօք ի՞նչ նպատակաւ, որո՞ւ մատուցանելու համար այդ ստուար պարութեան, յիշատակագիրն, որ անշուշտ գլուխ-գործոց մը պիտի ըլլայ իր տեսակին մէջ։ Իսկ եթէ այդ համարատուութիւնն ու եւ է ժողովոյ մը դատաստանին պիտի չենթարկուի կամ գէթ պիտի չհրատարակուի, ինչպէս հաւանական է, այլ գիւնադատան մէկ ծակը մգլտելու պիտի սահմանուի, աւելորդ չէ՞ այդ աշխատութիւն, ժամուրկութիւնն չէ՞ Կրօն. Ժողովն իր գիւնադպրին ըրած այդ յանձնարարութեամբ ի՞նչ ըսել կ'ուզէ. որո՞ւ ըսել կ'ու-

զէ։ Որչափ գիտենք, իր համարատուութիւնը պատրաստել ուղղող պաշտօնական մարմին մը կը պատրաստէ ու մէկէն երեւան կը հանէ, առանց առաջուց մունեալիկ հանելու, զեր մը զոր շարթուս լրագիրք կատարեցին, Կրօն. Ժողովոյ որոշմանց շարքին մէջ, իբրեւ կարեւոր ինչ, ծանուցանելով թէ Կրօն. Ժողովն յանձնարարեր է իր գիւնադպրին պատրաստել ժողովոյ եռամեայ համարատուութիւնը։

Ժողովուրդը պէտք չունի գիտնալու թէ Կրօն. Ժողովն իր համարատուութեան պատրաստութեամբ զբաղած է, գլուխ քերելու ժամանակ չունի, բայց պէտք ունի տեղեկանալու այդ համարատուութեան պարութեան պարունակութեան, եթէ երբեք հրատարակուի, գիտնալու համար թէ իր եռամեայ երկար պաշտօնավարութեան մէջ, Կրօն. Ժողովը, քահանայական վէճեր կարգադրելէ զատ, ուրիշ ի՞նչ հանրօգուտ տնօրինութիւններ ըրած է, Կրօն. Ի՞նչ պէտքեր հոգացած է, Կրօնական ու ամուսնական այն բոլորն պաշարին մէջ զոր Կրօնական ու աշխարհական գրիչներ մղեցին իրարու դէմ, ջուրը ծեծելով, ի՞նչ գեր կատարած է, ի՞նչ է իր որոշ կարծիքը Կրօնի հիւժախտին ու ամուսնական փոտախտին վրայ, ի՞նչ միջոցներ խորհած է այդ հիւժախտը դարմանելու, այդ փոտախտը խարելու համար։ Եթէ Կրօն. Ժողովն իր հաշակաւոր համարատուութեան մէջ շօշափած է այս խնդիրները, լա՛ւ, ատոր ըսելիք չունինք, իսկ եթէ այս շարթուսն լրագրաց մէջ հրատարակուած իր որոշմանց ամուլ ցանկին պէս, անուանական ցանկ մ'է իր համարատուութիւն, այժմէն ըսենք թէ ո՛չ վրք կրնայ շահագորգուել։

Բ. Պ.



ՅԱՐԳԱՆՔ ՅԻԾԱՏԱԿԻՆ

ՎՍԵՄ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՖ. ՆՈՒՐԵԱՆԻ

Օրէնսդէտ ու վարչագէտ Օսմանցի մեծ Հայ մը, պետական բարձր աստիճանաւոր մը, որ հազուադէպ իմացականութիւն մ'էր իր ցեղին ու սեռին մէջ, յանկարծ չիջաւ: Իր յեղակարծ ու ողբալի մահ իր շուրջ, իր ետեւ, իր նմանեաց պատկառելի շրջանակին մէջ կը թողու պարապ մը զգալի: Իբրեւ քեռորդի, վերջին նշանաւոր շառաւիղն էր այն բազմաբախտ մեծ Հայուն, Բրիտանացոյ տիրապետութեան Պեղծեան Ամիրային, որ Ազգին Մեծ-Տունը—Հիւանդանոցը—հիմնած է իբրեւ յաւերժական կոթող մը Ազգին երախտագէտ սրտին մէջ:

Յեղով, բարձրով, ազնիւ ձիրքերով, սուր իմացականութեամբ, ճշմարիտ աշխուհական մ'էր Վսեմ. Նուրեան էֆ., որոյ բովանդակ կեանքը՝ բարեգործական տեսակէտով՝ կը նմանէր մշտահոս գետի մը, ճիւղեր բարեբեր ալեօք կ'արգասաւորէ անխափ: Ո՛վ որ իր դուռը դարնէր հանրօգուտ գործի մը համար, ո՛վ որ իր վեհաճ. նութեան ու պաշտպանութեան գիմէր, երբեք չէր մեկնէր ձեռնունայն, վհատ, յուսահատ:

Ազգին իբրեւ խելանի ու դործունի մէկ պատուաբեր ու ականաւոր անհատը՝ անդամակցած է միշտ ամէն ժողովներու, իբրեւ կարող ու հանճարեղ վարչագէտ՝ վարչապետած ու ատենապետած է, և իր պաշտօնավարութիւն միշտ արդիւնաւոր հետքեր թողած է: Թէեւ, իբրեւ հանրային մարդ, իր բազմաբեղուն կեանքն ունեցած է քննադատներ, սակայն ասոնք ևս միշտ խորին սքանչացմամբ և յարգանքով խոստովանած են անոր վեհաճ. նութիւնը: Վսեմ. Նուրեան իր հանրային կարծիքները չէր գիտեր ծածկել գրուանի տակ, այլ հրապարակաւ կը քարոզէր և քարոզել կուտար իր համակարծիք խմբագիրներուն: Ի՛նքն ալ արդէն պերճախօս ատենաբան մ'էր: Լուսահոգի Ստեփան Փափագեան, որ յաճախ Վսեմ.

Հանգուցելոյն ընդդիմախօսներէն մին եղած է, ամէնուս առջեւ կը խոստովանէր յայտարարելով թէ՛ «Նուրեան էֆ. մեծ մարդ է. անկէ աւելի օրէնսդէտ չունինք մեք այժմ»: Ազգին մեծ լրագրապետ լուսահոգի Խօճասարեան ևս, որ Նուրեան էֆ. ի վարչական գործոց անըմբերանելի քննադատն եղած է, պատկառանք ու ակնածանք կը խօսէր Վսեմ. Հանգուցելոյն վարչական բարեմասնութեանց ու ձիրքերուն վրայ: Մեծութիւն մը, վեհաճ. նութիւն մը աննախանձ խոստովանիլն ալ մեծութիւն մ'է արդէն: Հանգուցիկ արտօնատէրն ևս, դժբախտութեան մ'առթիւ, դիմած էր Ն. Վսեմութեան պաշտպանութիւնը խնդրելու: Նորին Վսեմութիւն այս տեսակցութեան մէջ պատմեց իր վարչական գործունէութեան ինչ ինչ զիւրերը, և սա պատմագրելի յայտարարութիւնն ըրաւ. «Ես անձամբ դրած եմ իմ ազգային կեանքս, և պաշտօնական բոլոր գործերուս պատմութիւնն ըրած եմ, իմ կտակաւ ըրած եմ, և սա՛՝ սնտուկին մէջ է,—մասնանիչ ցոյց տալով սնտուկ մը,— օր մը զայն կարդացողները լաւ պիտի գնահատեն իմ գործերս և Ես այս խօսքերը կ'ըսէր ճիշտ ա՛յնպիսի չեղտով մը, որ կարծեցնել կուտար թէ օր մը ազգովին պիտի լսենք ինչ որ Անտոնիոսի բերնով լսեց վաղեմին Հռովմ.—Կեսարու պատմական կտակը»:


Վսեմ. Նուրեան էֆ. ի սոյն անձնական յայտարարութիւնը հրապարակելու մեր անդադունապահութիւնը թո՛ղ արդարանայ. մեք պարզապէս կ'ուզենք հաստատել թէ ազգային նշանաւոր վարչապետ մը, պետական դիւանագէտ մը իր կեանքը պատմագրած է, և Ազգը օր մը պիտի լսէ հմուտ ու պերճախօս գրիչ մը, որ պիտի լուսաւորէ զինքը մէկէ աւելի խնդիրներու վրայ: Բերայի Արուեստանոցէն քաշուած ատենն ալ կ'ըսէր. «Այժմ ազգ. գործերէն քաշուած եմ, և իմ զաւակացս կրթութեան պիտի հսկեմ: Տանս ու զաւակացս դաստիարակն եղած եմ. բոլոր հոգս անոնց բարեկրթութեան նուիրած եմ»: Այսպէս ահա՛ Վսեմ. Հանգուցեալն իր ընտանեկան շրջանակին մէջ ևս վարիչ ու քաղաքակրթիչ դեր մը կը կատարէր: Ուստի ուրախ ենք որ Վսեմ. Նուրեան էֆ. Ազգին և Պետու-

թեան ընծայած է բարեկիրթ զաւակներ որք պիտի անմահացնեն իր անունը :

Նուրեան էֆ. ինչպէս շատ մը թերթերու, նոյնպէս Հանրազգիսակի բարերարներէն մին եղած է : Կ'ողբանք իր վաղահաս մահը, և իր յիշատակը յարգանք կ'աւանդենք ա պազայ սերունդին : Վսեմ. Նուրեան Ազգին ու Պետութեան հանդէպ տիպար բարերար դէմքն էր, որ պատմութեան մէջ պիտի փայլի միշտ : Իր մեծահասակէն յուղարկաւորութիւնն արդէն երախտագիտական փառաւոր ցոյց մը եղաւ ազգին կողմէ որ գիտէ յարգել իր մեծ մարդերուն յիշատակը : Երկնից միտիթարութիւնը կը հայցենք իր սգաւոր ընտանեաց ու պարագայից համար :

— ԳՅԻՑ —

ՀԻԱՅՈՒՄ, ՄԱՀԱՅՈՒՄ



ՈՒՆԻՆՆԵՐԷՆ ոչ ոք կը խառնուէր, իր սեպհականութիւնը դարձած էր ալ այն քառակուսի ավի մը հողը որ լեզուի պէս տուններնուն կուշտէն վար կ'երկննար, և որուն շուրջը, աղիւսի ցած պատի մը վրայ, հանդիսաւոր կեցուածքով մը կ'սպասէր ատամնաւոր սիրուն փայտորմը :

Ատոր մէջ էր որ գարնան կ'երթար Վերոնիք իր նախասիրած խատուալի ծաղիկները մշակել : Ձեռքին ո՛րչափ կը վայլեցնէր կարճ կոթով բրիչը որով հողին հետ կը խաղար անձանձրոյթ, և թիթեղէ այն պզտիկ ցնցուղը որով իրիկուրները կ'ոռոգէր բոյսերը : Անոնց կազդոյրը առտուն սխրանքով կուգար դիտել :

... Հոս սմբուլ ու նարդէս՝ իրենց գինովցնող հոտով պսակները վեր կարկառուն, հոն շահողբամ ու ինդածաղիկ՝ արդուղարդնին վայելչօրէն տուած, անդին անթաւամ թաւրնջակներ՝ որոնց կորադարձագին դրասանգներու պէս կ'առկախուէր նազանքով : Հինգթերթի մանիշակը իր մինիներէ ցողունին վրայ մոռ դեղին թաւիչներ

կ'ոստայնէր, հնդիկ ջրկոտեմն ալ քրքում բեհեզ : Ածուներուն եզրը նախանձոտ նայուածքներ կը քթթէր վաղենիկը, մինչ չահպարակ, մեխակ ու վաշտեորի՝ իրենց կարգին՝ կը ցուցադէին լուռ ժպիտներ հրագոյն : Կանանչ ծղօտներու խորէն՝ շուշանին կաթ բաժակները կը լայնաբացուէին, ու պօզ տերեւներու շուքին տակ՝ եղրեանիին լուրթ ողկոյցները բուրեան : Վերը, փայտորմին շերտերուն վրայ, վարդագոյն թաթիկներու նման բո՛յլ բոյլ կը փթթէին այծտերեւիին ծաղիկները : Ատոնց մէջէն, ատոնց քովէն, խաւարծիլներու պարոյթը կար որ խարտեալ խոպոպներու պէս ոլորուած՝ բոյսերուն ճակտին վրայ կը դողդղար առտուն հովէն :

Ճերմակ քօղ մը մագերուն ձգած՝ կ'իյնար ատոնց մէջ, ոչ մէկին զրկում ընելով իր այցին պահուն : Ինքն ալ ծաղիկ մը գըրեթէ, անունէն բռնէ մինչեւ իր նրբաւարտ կազմը՝ տեսքոտ ծաղիկ մը ամբողջ յատկութիւնը իւրացուցած : Ու կ'սկսէր ընտրանքով քաղել զանոնք, իւրաքանչիւրը փըրցունելէ առաջ մէյ մը ոռնգերուն տանելէ յետոյ, նէլլիթէ փունջ մը պատրաստելու անոնցմէ և տանելու հեշտօրէն գերեզմանել սալօնին ծաղկամանին մէջ :

Ծաղիկները անտրտունջ կը ծռէին իրենց վիզը, փըրցունելու յօժար՝ գիրենք խնամող ատ քնքուշ մատուրներէն...

Երբ ձմեռ մը անցաւ վրայէն և գարնանամուտի ցանքը սկսաւ, ծնողքը վերջնապէս արգիլեցին Վերոնիքի այդ փունջ դաղանքը, որ իրենց համար չպիտուէր զարդարանքէ մը զատ ուրիշ առաւելութիւն մը չունէր : Խեղճ խնամատ ամուսնիքը որոշուած էին բանջարեղէնի ածուի վերածուելու :

Տխուր չէ՞ր տեսնել հիմա ատ մի՛կնոյն պարտէպին մէջ ձմեռի մը ընդհատումով՝ պրասին կոկոզավիզ ցօղունները անհրապուր, կամ կոշտ գանկերը կանկառին, երբեմնի խորոտ ծաղկանց տեղ : Պարարտ հողին վրայ աղցանախոտը ճմրթկուելով կ'աճէր կանանչ քուրջի կտորի մը պէս, ու սոխերը չէին քաշուեր բարկ, աղտոտ բոյր մը ցրցքնելու ընդհանուր ամայութեան մէջ : Ասդին անդին, լերկ ածուներուն եղրը կ'ե-

ընկերներն ատեն ատեն հողէն դուրս նետուած ծիւրեր. երբեմնի թուփերուն սերմերն էին ատոնք որ թափած ու բուսած էին նորէն, բայց որ հիմայ կը խլուէին կը նետուէին անպիտան մոլաբոյսերու պէս, փնաս մը չի պատճառելու համար մօտի բանջարեղէններուն...

Վերոնիք ցաւեցաւ այս տմարդութեան հանդէպ. ինչո՞ւ չարանային իրեն անուշ դրօսանքին: Ինտո՞ր ալ սիրտ ըրած էին ծնողքը եղծել այն գողար բանաստեղծութիւնը որ ռեհանին, նունուֆարին կամ յասմիկին կոյս առէջներէն կ'արտաբղխէր նոյն պարտեզին մէջ, տեղը բերելու համար բողկին կամ ազատքեղին նողկանքն անհարկի...

Հայհոյանք մըն էր աս՝ Գեղեցիկին, Ազնիւին երեսին պոռայցուած:

* * *

Ծաղիկներ չէին նաեւ այն իղձերն ալ զոր երկար հանգարտ ամիսներ, ցորեկը դաւար լուսամուտին առջին ու գլխերը ժանեակէ մահճակալին մէջ սաղմնած, բուծած և ոռոգած էր եթերային անըջանքով մը, սաղմնած՝ հոգիին խօ՛ւ խանդովը, բուծած՝ թռուցիկ հրայրքովն իր գարուն սիրտին, և ոռոգած՝ յոյսի քաղցր անձրեւներով:

Այո՛, ծաղիկներ՝ այդ իղձերը, յափուկին պէս փափուկ և անմոռուկին պէս անմեղուկ...

Բայց օրին մէկը յանկարծ թօշներ, լղբըճուեր էին անոնք աշունին հոգեվարքով եւ ձմեռուան թաղումովը, որովհետեւ ծնողքը հակառակ իր կամքին՝ կեանքին ծիծղուն նաւորտը տարեր էր կապել անասնի մարդու ինչ որ ապուխտի հոտն ունէր ժողատ բերնին մէջ և գարշանքը՝ ճաղատ մզլոտ գանկին տակ...

Դ. Կ. Մանուկ



ՄՐՏԻ ՓՈՐՁ

[ՈՒՍԱՆՈՂԻ ՄԸ ՅՈՒՇԱՑՍՏՐԷՆ]

Յունվարի մէջ էր ծուրտ, շատ ցուրտ երեկոյ մը: Հիւանդոտ դեղնած արեւը կը վարանէր դեռ բլուրի մը ետեւ ուր ձիւնհալը թոյլ կուտար տեսնել պզտիկ կանանչ խոտերով պատառուած հողը: Ու մութ կապարի գոյնով մը կը ցանցնուէին սուպերը ալեմաշ փրփրուտ խութերու պէս, ու, տեղ տեղ, հորիզոնին սառնոտած ամպ-յութեանը մէջ, շարժուն տարտամ դիծեր կ'անհետանային իրարու ետեւ:

Անձրեւը դադրած էր: Ամբողջ երկու ժամուան ձանձրոյթ մը գամել սուած էր զիս անկիւն մը, սինեակին տաքութենէն աղտացած ապակիին քովիկը, աչքերս տընկած դուրսի երկարաձգուող սալարկին որ աղտոտ անհաճոյ ջիւղխանքի մէջ կը լողար:

Ճիշտ ատենն էր: Պիտի մեկնէի: Անանուն յուզումներու մէջ կ'եռար սիրտս: Միշտ տարակուսող ամէնէն մօտիկ բաներուն՝ միշտ առանց հաւատալու կորովիութիւնը ունենալու, առանց խարուելու իմ շուրջս ապրող երեւոյթներէն, տարակուսի երազով մը կը փրփրէր ներսիդիս, կը հասցնէր զիս՝ կ'զգայի թէ պէտք չէր այնքան շուտ հաւատալ Սեբ կոչուած բանի մը զոր ես աւելի մայրերու քով տեսած էի մինչեւ այն ատեն, անգութ հետաքրքրութիւն մը վերլուծելու, քրքրելու հոգիի մը բոլոր ալքերը, շօշափելու նոյն խկ բոլոր զգացումները, դրդել կուտար ինձի ակամայ փորձութեան մը ենթարկելու զիս մշտնջենապէս սիրել խոտացող աղջիկը:

«Մշտնջենապէ՛ս» կ'ըսէի, այս բառը իրենն էր, զոր յանկարծ յուշաբերեցի:

Ջերոցին մօտեցայ: Ծաղիկներու թաղարներ կային հոն, ոչ մէկը թողած էր անոնցմէ, ամէնքն ալ պահած իրենց թարմութիւնը ու բոլոր հմայիչ երանգները զոր գարունը փափկօրէն կը դնէ անոնց թերթերուն վրայ: Դեղին վարդ մը կար խոշոր, բայց շատ սիրուն, որ, զխիկոր, տաքութենէն յափրացած, կը բուրէր տակաւին

... Կարմիրներ ալ կային անոր մօտ, բայց դեղինը շատ մօտէն կը խօսէր սրտիս, որովհետեւ դեղնած սէր մը կ'երեւակայէի փոխանակ կրակոտ եռանդուն սիրոյ մը: Ու փրցուցի զայն երկու մատներուս մէջ: Աղջկանը պիտի տանէի այս վարդը, ու ալ պիտի գիտնայի թէ կը սիրէր կամ չէր սիրեր բնաւ, որովհետեւ մինչեւ այն ատեն գրգռուող տարտամութեան մը մէջ ապրած էին մեր սրտերը...

* * *

Հիմայ կը քալէի արագ, ցերեւոտած քաղաքատակներուն վրայէն: Ականջներս կը կոթալային ցուրտէն, դէմքս ամբողջ կարմիրած էր, արիւնս եռանդուն շրջան կ'ընէր մորթիս տակ: Դրեթէ կը վաղէի դիւահարի պէս, առանց դիտելու որ իւրաքանչիւր քայլափոխիս ջուրի աղտոտ ցատկաւորութիւնը կը ծածկէին կօշիկներս:

Հասած էի: Ներս մտայ, վարդը միշտ գրպանիս մէջ, վախճալով որ կը թափթփիէին թերթերը:

Շատոնց ի վեր չէի տեսած զինքը: Միեւնոյն ժպիտն էր, չէր փոխուած: Բայց ես չէի հաւատար դիմագծերու, ու անոր համար աւելի մօտէն թափանցել կ'ուզէի իր հոգին:

Ուշ էր: Պէտք էր շուտ ըսէի իրեն դաւուս նպատակը: Իրեն հետ սենեակն էի առանձին: Բազմոցին վրայ երկար շունչ մը առի կցկտուր բարեւէ մը վերջ, վարդս հանեցի, անարատ, անվթար պահած էի զայն ճիշտ այնպէս ինչպէս քաղած էի:

— Ինձի նայէ՛, իմ սիրտս ձմեռ չունի, հաւատո՞ւ՛, մի՛ խնդա՛ր, ու, ասոր իր պացոյց, միշտ գարուններու մէջ փթթող վարդ մը պիտի տամ քեզի, գարուններու մէջ...

Ձայնս կը թրթռար, կ'զգայի թէ անկարող էի խօսելու, նախ որովհետեւ քաղած էի անընդհատ, ու յետոյ յուզում մը կար ներսիդիս այսքան կասկածոտ ըլլալու համար:

Ան խնդաց ու փափուկ մատներովը վարդը առաւ, իմ անձմեռ սիրտս, սեղանի մը վրայ կիսովին ջուրով լեցուած բաժակի մը մէջ դրաւ:

— Ձմեռուն մէջ վա՛րդ, բացազանչեց աղջիկը, ու, միեւնոյն ատեն, անոր արբիւղ դիմագծութեան առջեւ Ռիչըէնի սա զուարթ տողին վերջիւումը կը գգուէր սիրտս:

«Rien ne finit, tout recommence».

* * *

Նրեք օր վերջը:

Խոչ եղած էր վարդը, ա՛յնքան հիացումով ընդունուած ձմեռուն ծաղիկը:

Մառախուղ մը երթալով կը թանձրանար հեռակայ ըլուրներուն ոտքը, ու, տեղ տեղ, ուրուականի պէս, կիսահալ նոճիներ կը տնկուէին անարեւ անկենդան ամայութեան մէջ: Բայց անպատճառ պիտի տեսնէի վարդս, անպատճա՛ռ: Հիւանդութիւն մըն է ասիկա, որ ամէն սկիստիկ սիրահարի դանկը կը չարչրէ, հետաքրքրութիւն մը որ տխուր յափացումով մը կը վերջանայ յաճախ, դերագոյն տիրութիւնով մը զոր երբեք ապրած ըլլան ջիղերը...

Նորէն կը վազէի: Դիտուած է որ ամենէն սնոտի պատճառներն են որ ամէնէն դիւցազնական անյուսալի գործերը կը դըրդեն ընել, ու դժուարին ըլլալէ աւելի անտանելի չէ՞ր վաղել այսպէս ցուրտ եղանակին, ոտքերս կաշուն անպիտան ջիւջիւսներին մէջ, գլուխս հոգեկան ամէնէն խենդ փոթորկին նշաւակ, առանց ցպիկ մ'ունենալու ձեռքիս մէջ՝ սայթաքելու ամօթը չունենալու համար դէթ անցորդներուն առջեւ, որք պահ մը կը դիտէին չարժուուն անհանդարտ ստուերս, ու յետոյ կը հեռացնէին իրենց աչքերը իրրեւ ամէնէն աննշան չնչին առարկայի մը:

Բայց ես կը քալէի:

Կիսովին ձիւնով ծածկուած փայտէ սեմին առջեւ կանգ առի: Մատներս կը վարանէին, բայց նորէն դպայ բոյթին, ու զանգակին հիւանդոտ մղրտոտ ձգտուքը սարսուել տուաւ դիս, ու սպասեցի:

— Հրամանեցէ՛ք:

— Դէ՛, նորէն միեւնոյն շեշտը, փոխուած չէ՛ր ան: Իր քաղաքավար չարժուածքերը չէի սիրեր սակայն ու կը վախնայի որ անկեղծութենէ կը հեռացնէին հոգին...

Նորէն միեւնոյն սենեակին մէջ:

Առանց արեւի, խոնաւուտ իրիկուան մը ցուրտ տգեղութիւնը ունէին պատուհանները, վարագոյրները վեր քաշուած էին ամենքն ալ, կարծես աւելի մօտէն ցոյց տալու ինծի մեռած բնութիւնը:

Մեռած բնութիւնը...

Ու յանկարծ վարդը երեցաւ աչքիս առջեւ միեւնոյն տեղը, բաժակին մէջ: Զիս կը սիրէ՞ ուրեմն, ինչ մեծ գուրգուրանքով պահած էր անշուշտ, որպէս զի վարդը ապրէր միշտ, ու նորէն դիտէի զայն իմ հիացիկ լքումիս մէջ:

Մատներս դալած էին անոր մատներուն... աչքովս բան մը կ'ուզէի ըսել իրեն, — Վարդը...

— Այո՛:

— Դէ՛, ալ թողմած է, տե՛ս, ալ կը թափթփին թերթերը:

Ծաւոտ տգեղութիւն մը մէկէն ծածկեց այտերս, ու ան չնայեցաւ թէ ո՛րքան յուզուած տենդահար կը շարժէի: Սեղանին առջեւ կեցայ, աչքերս պիշ վարդին: Զուրի կաթիլ մը տեսայ երկու թերթերու մէջ, ուղեցի շօշափել, բայց դողացի, չկրցայ, չհամարձակեցայ:

... Այդ կաթիլը արցունք մը չէ՞ր, սրտիս խորունկէն յորդուած կաթիլ մը, բողբոջ անոր «թողմած» բառին առջեւ, այնքան ցուրտ լեզուով մը արտասանուած:

Անգո՛ւթ...

Եւ քանի որ իբրեւ իմ սիրտս նուիրած էի այդ ծաղիկը իրեն, ինչպէ՞ս կը յանդգնէր թողմած կոչել զայն: Եթէ պիտի սիրէր, ինչո՞ւ այդ բառը, եթէ պիտի ուզէր սեղմել իր սրտին դէմ իմ սիրտս միշտ պատրաստ բաբախելու, ինչո՞ւ ուրեմն այդ չար հակասութիւնը:

Մութը կամաց կամաց ամէն բան կը հալեցնէր, ամէն բան մարած էր ու բողբոջ արցունքը, սատափէ ուլունքի պէս պսպղուն, միայն դեռ կը խօսէր աչքերուս:

Հիմայ, գլուխս կախ, հովանոցը բացած գլխուս վրայ, կ'երթայի, կ'երթայի առանց գիտակցութիւն ունենալու ըրածիս: Մէկ քանի տերեւներ, տգեղ անձոնների կարմիրով մը, կը սլքտային հոս հոն սմբած, տներակ:

Ու տերեւ մըն ալ ես, կ'երերկտայի, կ'անցնէի փողոցին խորունկէն, առանց ետիս դառնալու, ձեռքս կուրծքիս դրած վախճալով որ կը դադրէր բաբախելէ, ակունջս հիւանդոտ լսողութեամբ մը որ մարդկային չէր, քանի մը անգամ, սառած ստուերոտ օդին մէջէն, ճղակտոր հեւքի մը պէս, կըրկնուելով սա բառերը խուլ, մանր ու ցաւագին:

«Ա՛լ թողմած է, թողմած է քու սիրտդ ալ...»

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

[Շաբ. Ը. թիւէն]

Ծարդ ըսուածներէն հասկցուեցաւ թէ տիեզերքի գոյութեան սկիզբը եթերն ու հիւլէն են: Ինչպէս կուտէ մը սկսած է ծառը, կաթիլէ մը՝ ովկէանը, կամ Արամազդն ու Հռոմուլոսը, այնպէս ալ Համագոյքին արտադրութիւնը կ'սկսի ձգողութեան կեդրոնէ մը, որ իր շուրջ կը հաւաքէ իրեն մերձակայ տարրները: Այս գերազանց օրէնքին հնազանդելու օրինակը զառաջինն հիւլէն ինքը կ'ընծայէ:

Եթերային անսահման տարածութեան ու է մէկ կէտին վրայ կը գոյանայ ձգողութեան կեդրոն մը: Եթերը տակաւ առ տակաւ կը խտանայ այս կէտին շուրջը, և այս խտացման հետեանօք անկշռելի եթերը կշռելի վիճակի մը կը գոյափոխի, և հիւլէն՝ նիւթին այս վերջին ծայր մանր ու փոքր տարրն՝ այսպէս կազմակերպուած կը լինի:

Նիւթին գոյացման այս կերպէն առնուած է թէ ոչինչէ ստեղծուած է տիեզերքը: Կ'արդարանայ և աւելի կը հաստատուի Ս. Գրքին այն խօսքն ալ որ կ'ըսէ թէ Աստուած երկինքն ու երկիրն ոչինչէն ստեղծեց, հասկցնելու համար անկշռելի վիճակի մը վերածուելուն և տիեզերական գոյացութեան ինքնին անդգալաբար յառաջ գալուն կերպը: Այս մեծ երեւուի ին այս կերպ

ըմբռնումը ո՛չ մէկ խելքի համար խրատացուցիչ հանգամանք ունի: Կրնանք տիեզերագործութեան մեծ երևոյթը պարզապէս թանկ ալ բացատրել. եթերին ինչ ինչ հիւլէներուն միացումը, — եթէ հիւլէ բառը կըրնայ գործածուիլ նշանակելու համար այս հոսանուտին (եթերին) վերջին մասնիկները —, կը կազմէ նիւթին մէկ հիւլէն: Ուրեմն ստեղծագործ նիւթին հիւլէները եթերին մասնակի կամ մասնկաւոր խտացումներն են, որք անկշռելի վիճակէն կշռելի վիճակի մը անցումը կամ վերածումը կը ներկայացնեն, ճիշտ ինչպէս մատիմաթիգական կէտը երկայնութեան չափին ոչնչութենէն գծային իրականութեան անցքը կամ վերածումը կը ներկայացնէ. այսինքն թէ ո՛չ ապաքէն ո՛չ զիծը, ոչ կէտն ինքնին գոյութիւն չունին, և սակայն մենք կէտերը դնելով, կէտերը գծի վերածելով՝ ոչինչէն չափեր կը շինենք, և գիտական ու ճարտարաբանական այնքան հրաշալիքներ կը յօրինենք: Եթերն անհուն, անսահման, անսպառ լինելով, կը հետեւի թէ իր արտադրութիւնն ալ անհուն, անսահման եւ անսպառ է, եւ թէ տիեզերքն իր գոյութեան տարրները կը քաղէ անսպառելի շտեմարանէ մը:

Այս մտածումէն առաջնորդուած, սա անխուսափելի հետեւութեան կը յանգնիք թէ ոչ մէկը մտքէն կրնայ անցընել թէ ստեղծագործութիւնը, որ մշտատեւ է, իրեն տրամադրելի տարրներուն չգոյութենէն օր մը պիտի կրնայ դադրիլ: Այս կէտը ուրիշ յօդուածի մը մէջ ալ ի վեր պիտի հանենք, հաստատելով թէ ցորչափ եթերն անսպառ ու անհուն է, ստեղծագործութիւնն ալ պիտի շարունակէ միտլ անվստահան, անսպառ և անհուն:

Եթերային խտացումներն, որք նիւթին հիւլէները կ'արտադրեն, և կրնան շատ տեսակ կերպերով կատարուիլ հարկաւորապէս, շատ մը պէս պէս ու զանազան արդիւնքներ յառաջ կը բերեն: Ստեղծագործութեան անհուն զօրութիւնն երբ եթերային վերնագաւառի մը մէջ հիւլէներն արտադրել կ'սկսի, խորհրդաւոր աշխատութիւնը կը կատարուի միւլտիպլ ատեն անջըր-

պետին այնպիսի մէկ տարածութեան մէջ, որուն չափը, ամէն կողմ և ամէն ուղղութեամբ, միլիառաւոր միլիառ մղոններ ընդարձակութիւն ունի: Երբեք չղարմանանք այս խոշոր ու մեծ թիւերուն վրայ՝ որոց պիտի պատահինք երբեմն, նախ և առաջ՝ ընդհակառակն՝ անոնց հետ ընտանեանք: Երբ անհունին մէջ է որ կը գործածուի, վախ չկայ թէ աշխատութեան սահմանները կրնան հատնիլ սպառիլ: Հո՛ն, անհունին մէջ, ամէն հունաւոր տարածութիւն, ո՛րքան ալ ահագին տարածութիւն ունենայ, աննշարելի կէտի մը պէս աչքի առջեւէն կ'անհետի:


Անհունին համար, արեւուն մեզմէ հեռաւորութիւնը՝ որ 38 միլիոն մղոն է, մազի մը հաստութեան կամ թանձրութեան հաւասար աննշան բան մ'է: Հեռեւաբար միլիոնաւոր մղոններն ոչինչ տարածութիւններ են անոր առջեւ, որ ո՛չ հուն, ո՛չ սահման, ո՛չ վախճան ունի:

Եթերն ուրեմն կը խտացնէ իր հիւլէները անսահման գործարաններու մէջ, որք իրարմէ ա՛լ աւելի անսահման միջոցներով բաժնուած են, խուսափելու համար աշխատանաց խառնաշփոթումէն, և հնազանդելու համար ա՛յն ընդհանուր օրէնքին որ իրարմէ անջատելով կը զատէ ստեղծագործութեան բոլոր կեդրոններն, իրենց կարեւորութեան համեմատ, հաւասար հեռաւորութեամբ:

Այսքան ընդարձակ ու հսկայածաւալ տարածութեան մը վրայ ցրուած այս ահագին գործարանները հիւլէներ բանկով շինելիք ի՞նչ բան կը պատրաստեն. անոնք կը պատրաստեն միգամածներ (nébuleuses): Ամէն մէկ միգամած նոր տիեզերքի մը սերմն է:

Այս միգամածներու ծագման ու կազմաւորման մասին գալ անդամ:

Ա. Լ.



ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, Ի

ԳԵՂԵՑԻԿ. — ԱՐՈՒԵՍՏԸ. — ԱԼ.ՇԻՄԻՆ

ԳԵՂԵՑԻԿ (Beau). — Դպրութեան ծագումն էն ի վեր բոլոր իմաստասէրք իրենց տեսութեանց մէջ մոլորութեւն չափ վիճաբանած, հակաճառած են գեղեցիկին բնութեան, գոյութեան և անոր հանգամանաց, յատկութեանց վրայ. Անոնցմէ ոմանք կը բաւականանան մեր վրայ գեղեցիկն ներգործած տպաւորութեան սահման զնելով ըսել. «Գեղեցիկ է ինչ որ աչքին ու մտքին հաճելի և ակործելի է»։ Ոմանք իրենց պետ ունենալով Պղատոնը՝ անոր հետ կը յայտարարեն թէ գեղեցիկն ուրիշ բան չէ եթէ ոչ իտէալին ցոլացումը, ճշմարտին մէկ ճառագայթումը, վերլիշումն գերազանց այն գեղեցկութեան ջնջուած կամ աղաւաղուած գաղափարին՝ զոր հոգին իր սկզբնական անաղարտ գոյութեան մէջ հայեցական զմայլմամբն ունեցած է, և այժմ անխմանալի, անըմբռնելի լինելու չափ մեր մտքին անհասանելի է։

Ոմանք ալ՝ Արիստոտէլին հետ գեղեցիկը կը փնտռեն կը գտնեն մասանց իրարու հետ ունեցած ներդաշնակութեան (harmonie — ordre) ու բարեւոյ յօրինուածութեան մէջ։ Շատեր Լայպնիցի, Վոլֆին՝ Պոսպարտէնի հետ կասարելութեան կամ կասարելագործութեան (perfection) մէջ. Գրուդազին հետ՝ պէսպիսութեանց հետ յօնգործած միութեան մէջ. ոմանք պէսպիսութեան, սյուսեանութեան (convenance) մէջ կամ իրաց իրենց սահմանաւ նպատակը կատարելու կարող յատկութեան մէջ, և նոյն իսկ անոնց օգտակարութեան՝ մէջ, թէև չատեր՝ ընդհակառակն գեղեցիկը օգտակարին հակառակը կը նկատեն, և գեղեցիկը ամէն շահախնդիր գաղափարներէ վեր ու գերծ կը դատեն։

Այժմեան իմաստասիրաց մեծ մասը, Ժօֆրուանին հետ, գեղեցիկը կը կայացնեն բացայտութեան (expression) մէջ, տեսանելիով անտեսանելիին արտայայտութեանը մէջ. մարմնական, նիւթական ձեւերով հոգւոյն

զգացումները ներկայացնելուն մէջ։ Բայց բոլոր ասոնք գեղեցիկը սահմանելու խնդիրն ալ աւելի կը կնճռոտեն կը խրթնացնեն, և կը հեռացնեն անոր լուծուած իր նպատակէն։

Գեղեցիկ բառը իրարմէ էապէս տարբեր կարգերու նոյնչափ իրաց կը պատշաճի, որ անկարելի կը թուի միակ սահման մը տալ անոր՝ որ բովանդակէ, պարունակէ ինքնին իրենց մէջ գեղեցիկ նկատուած բոլոր իրերն ու առարկաները։ Գեղեցիկն առարկայօրէն (objectivement) կը բաժնուի, բնագիտական գեղեցիկ, իմացական գեղեցիկ, բարոյական գեղեցիկ, իրական գեղեցիկ, խեղճական գեղեցիկ, քական գեղեցիկ, պայմանադրական կամ հնարածոյ գեղեցիկ, բնական գեղեցիկ, նմանողական գեղեցիկ, պարզ գեղեցիկ, խառն կամ բարդ գեղեցիկ՝ և որ ի սակի են. նոյն իսկ բնագիտական (physique) գեղեցիկը կը բաժնուի նկարէն գեղեցիկ (գոյներ ու ձեւեր), ձայնագրական կամ երաժշտական գեղեցիկ, և որք կը վերաբերին դեռ ուրիշ այլ այլ կարգերու. սակայն երբ կը ջանան գեղեցիկը մեր վրայ ազդած, ներգործած արդիւնքին համաձայն կամ հետեւութեամբը նկատել կամ սահմանել. կրնանք ըսել թէ գեղեցիկը ոչ միայն ան է՝ ինչ որ մեզ հաճելի, ակործելի է, այլ ինչ որ մեզ կ'զմայլեցնէ, ինչ որ կը գրգռէ, կը յուզէ սիրոյ կամ սեռական ցանցման զգացումները։ Գեղեցիկ բառը՝ ինչպէս կ'երեւի, յայտնի է թէ սկիզբէն յատկացուած է կարգ մ'առարկաներու, անտարակոյս այն կարգի իրերու որ կ'զմայլեցնեն, կը հրապուրեն տեսութիւնը. և յետոյ քնականապէս անոր (գեղեցիկ բառին) նշանակութիւնն ու իմաստը տարածուած են բոլոր այն բաներուն վրայ, որք աչքը չլացնող, տեսութիւնը հմայող, սքանչացնող առարկայներու նման, կրնան բոլորովին զուտ հայեցողական, հոգեկան հաճոյք մը, հրապոյր մը պատճառել մեզ։ Գեղեցիկ բառին տրուած սոյն իմաստը կերպով մը կը հաստատէ նաև Փրանսական Ակադեմիոյ Բառարանը, որուն մէջ գեղեցիկ բառը սապէս կը սահմանուի. «Այն՝ որոյ համեմատութիւնքը, ձեւերն ու գոյները կը հաճոյանան աչաց եւ կը ծնուցանեն սքանչացումը»։

Գեղեցկին ուսումը, ամէն ժամանակ, չահեկան, հետաքրքրական կարեւոր խուզարկութեանց, մտաւոր մշակութեանց առարկայ եղած է, և այսօր մարդկային միտքը զբաղեցնող գիտութեանց կարգին մէջ մասնաձիւղ ուսում մ'եղած է, զոր սովորած ենք Հայերս կոչել գեղագիտութիւն կամ ճաշակագիտութիւն (Esthétique), սակայն բառին բուն յունական իմաստովն ըսելու էինք Զգայագիտութիւն կամ Կիտուութիւն զգացմանց :

ԳԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Esthétique) . — Այս բառն յունարէն եսթետիսն է, որ զգացում ըսել է : Այժմ ինչպէս ըսինք, զատ գիտութիւն մ'է, ա՛յն է Գեղեցիկին գիտութիւնը և Արուեստին փիլիսոփայութիւնը, և մասնաւորապէս կը խօսի գեղեցիկին եւ անոր ներշնչած, ներգործած զգացումներուն վրայ : Այս գիտութիւնը, թէև փիլիսոփայութեան չափ հին է, սակայն անունն ու բառը նոր է : Ուսումնական աշխարհն այդ բառը կը պարտի գերմանացի Պոպկարտէն իմաստասէրին, որ 1750ին, Ֆրանքֆորդ — Սիւր — լ'Օտէրի մէջ հրատարակեց իր առաջին գործը Էսթետիկա տիտղոսով, որ կը ճառէր ընդհանրապէս գեղեցիկին ու անոր յուզած, պատճառած զգացումներուն վրայ, կը խուզարկէր թէ գեղեցիկը բոլորովին զուտ կերպով յարաբերական բան մ'է, թէ բացարձակ կանոններէ կախումն ունի, և իր այս գեղագիտական տեսութիւններէն ըրդ իսած, հանած ու հաստատած սկզբունքները արուեստին ծաղկման ու զարգացման ի նըպաստ կիրարկելով՝ կը ծառայեցնէր զանոնք ընդհանրապէս մասնաւոր արհեստներէն իւրաքանչիւրին ի պէտս :

Էսթետիկի՝ ինչպէս նաև գեղեցիկի մասին ընդարձակ ուսումնասիրութիւններ պիտի աւանդուին Հանքագիտակի յաջորդ թիւերուն մէջ :

[Շարունակելի]

ԵՐԿՐԱԳՈՐԾ ՈՒԹԻՒՆ

ՈՒՐԴԱՌՈՐՈՒՄ. — ՈՌՈԳՈՒՄ

Երբ հողը չափազանց խոնաւ է, ուրդաւորման (drainage) կը դիմենք, և երբ խիստ չոր է, ոռոգում ի գործ կը դնենք :

ՈՒՐԴԱՌՈՐՈՒՄ [drainage]

Գետին մը չափազանց խոնաւ է, երբ անձրեւներու ջուրը կը պահէ. ասիկա յառաջ կուգայ մանաւանդ երբ ներքնահողն անթափանցելի, անջրանցիկ է : Այն ատեն, անձրեւէն երկար ատեն վերջն իսկ չճացեալ ջրակոյտեր կը մնան հողին մակերեսովին վրայ, եւ երբ այս տեսակ հողերու մէջ ծակ մը կը փորենք, մինչեւ իսկ երաշտութեան ժամանակ, շուտով կը գտնենք խոնաւութիւնը :

Հողին վրայ տնոգ բոյսերն իրենք իրենցմէ իսկ ցոյց կուտան անոր չափազանց խոնաւութիւնը : Գէշ կը սնանին, կորովի ըլլալէ կը դադրին, կը թուլնան և կ'ոսնին. երբեմն ալ կը չորնան : Անոնց մէջ կը տեսնենք սակայն ուրիշ բոյսեր, որք ջրասէր են. ինչպէս ձիւնձաղիկը (colchique), հրանունկը (renoncule), մամուռները (mousse), ինչպէս նաև ուրիշ մ'կ'ընեն բոյսեր, որք ճամարիտ ջրային տունկեր են, ինչպէս ձիագին (prele) և կնիւններու այլևայլ տեսակները :

Ընտանի անասունները ծանր հիւանդութեանց կ'ենթարկուին, երբ չարունակ խոնաւ, թրջած հողի մը վրայ ապրին, մինչ մարդիկ ալ հաճախ տեսնող կը վարակուին հոն : Ուրեմն անհրաժեշտ է դարման տանիլ իրաց այս վիճակին, և հողէն բառնալ իր տարապայման խոնաւութիւնը, ազատելով զայն իր պարունակած չափազանց ջուրէն : Այս բանը ձեռք կը բերուի ուրդաւորման միջոցաւ : Ահա ի՞նչ բանի մէջ կը կայանայ այդ գործողութիւնը : Մասնաւոր բահերու միջոցաւ, որոց երկաթը նեղ, գոգաւոր ու

ԵՍՆՈՒԹ. — ՈՐԵՐ կը նշանակէ ԷՆԵՐԻ [conduite, rigole]. — ԵՆԵՐԻ՝ կ'ըսուի ԵՐԵՐ, ԷՆԵՐԻՆԵՐ գետակիւղ գործողութեան :



երկարածեալ է, կը փորեն կարգ մը փոսեր որք 1 կամ 1.50 մէդր խորութեան մը վրայ կ'ունենան զրեթէ 0.50 կամ 0.60 մէդր բացուածք մը (բերան) եւ 0.20 կամ 0.25 մէդր յատակ մը: Հոգ կը տարուի այդ փոսերուն տալ ծողթիւն մը: Հողին զառիվայրին ուղղութեամբ, այնպիսի կերպով մը որ անոնք միանան միակ փոսի մը մէջ, որ հողին ամէնէն ցած մասին մէջ կը պիտի ունենայ: Յետոյ, երբ այդ փոսերուն յատակն աղէկ մը միացած է, անոր մակերեւոյթին վրայ կը շարեն հողէ փողրակներ, ուղղեր (drain), որք յատկապէս շինուած են, եւ որոցմէ առած է գործողութիւնն իր ուղղաւորում անունը: Այս փողրակները ծայրէ ի ծայր կը յարմարցուն, երբ անոնց ծայրերը կոնածեւ են. իսկ եթէ գլխածեւ են, անոնց ծայրերը կը ծածկեն հողէ ձեւնոցակով (manchon) մը որ ջուրը փախչելէ եւ հողը փողրակին մէջ մտնելէ կ'արգիլէ: Երբ փողրակները կամ ուղղերը փոսին մէջ լաւ մը շարեն, փոսը կը լեցնեն հանուած հողով: Երբ ժամանակի մէջ հարթ հաւասար կ'ըլլայ, այնպէս որ վերահողին մակերեւոյթին մէկ մասնիկն իսկ չի կորսուիր:

Հողերուն մէջ պարունակուած ջուրը փողրակներուն կը հետեւի եւ այսպէս հողը կ'ազատէ իր խոնաւութենէն: Ուրդաւորման փոսերուն թուին եւ հեռաւորութեան նկատմամբ որոշ կանոն մը չի կայ: Պարագանքերը պէտք է ի նկատ առնել եւ չափազանց չբազմապատկիլ անոնց թիւը, որպէս զի չ'ըլլայ թէ հողը բոլորովին չորնայ: Լաւ հասկցուած ուրդաւորումը կը բարւոքէ հողին վիճակը, եւ եթէ ընդարձակօրէն ի գործ դրուի, կրնայ ամենամեծ աղբեցութիւն ունենալ մարդոց եւ անասնոց առողջութեան վրայ, օգը մաքրելով բովանդակ գաւառի մը, որ մինչեւ այն ատեն վատառողջ մնացած էր իր տարապայման խոնաւութեան պատճառաւ:

ՈՌՈԳՐԱՄ [Irrigation]

Ուրդաւորման հակառակ, ոռոգումը նպատակ ունի խոնաւութիւն տալ ինչ ինչ հողերու, որք խոնաւութենէ զուրկ են, որպէս զի կարելի ըլլայ ապահովել բոյսերուն կանոնաւոր աճումը:

Բոյսերու կեանքին անհրաժեշտ ջուրի

պաշարը պէտք է միշտ նորոգել, վասն զի անոնք շարունակ կ'սպառեն զայն միշտորտին մէջ, լուսոյ եւ քերմութեան ազդեցութեան տակ: Աշխարհի բոլոր երկիրներուն համար ալ, ոռոգման սիցարունքը միածեւ է: Ոռոգումը կը կայանայ բնական կամ արուեստական աւազանէ մը ջուր առնել եւ քրուղիներու միջոցաւ ոռոգելի հողին երեսը տարածել ըստ պիտոյից: Դժուարին է որոշ կանոն մը սահմանել թէ այս ինչ կամ այն ինչ հողին ո՞րչափ ջուր տալու է: Ղիւրմբաբներէ է թէ ջուրին քանակութիւնը կը տարբերի ոռոգուելիք բոյսին բնութեան, հողին բաղադրութեան եւ տարւոյն օգերեւութարանական պայմաններուն համեմատ:

Ոռոգումը կրնայ ի գործ դրուիլ ամէն եղանակի մէջ: Ձմեռն ի գործ դրուած ոռոգումները կ'ամբողջանան տղմաւորումով (colmatage), այսինքն ոռոգմանց տղմաւոր ջուրին մէջ արգասաւորիչ նիւթեր աւելցնելով գորս ջուրերը կը թողուն ցած կամ անբեր հողի մը մակերեւոյթին վրայ եւ զայն կ'արգասաւորեն, ինչպէս կաւ, հող, բուսային բեկորներ եւն:

Ոռոգման մէջ պէտք է զգուշանալ չափազանցութենէ, վասն զի եթէ հողին խոնաւութիւնը մինչեւ աստիճան մը անհրաժեշտ է երկրագործական բոյսերուն բարւոք աճման, այս աստիճանն անցունելն ալ բացարձակապէս ֆլասակար կրնայ ըլլալ անոնց եւ շուտով յառաջ պիտի բերէ արմատական ամլութիւն մը, մանաւանդ հերկելի հողերուն համար: Իսկ մարգագետիններու համար գրեթէ բնաւ վտանգ չկայ, եթէ չափէն աւելի ալ ոռոգենք զանոնք:

Ոռոգումն անշուշտ երկրագործութեան ամէնէն էական, բայց միանգամայն ամէնէն աւելի զանց առնուած գործողութիւններէն մին է: Ի՞նչ ամուլ երկիրներ, օրինակի համար Եգիպտոս, շատ արգասաբեր եղած են շնորհիւ այն շինութեանց որք ոռոգման կը ծառայեն, եւ գետերուն ու գետակներուն ջուրերը կը շահագործեն: Փոքր Ասիոյ մէջ շատ տեղ ժողովուրդը տակաւին կարող չէ օգտուիլ այն գետերէն ու գետակներէն զորս բնութիւնը պարզեւած է այդ երկրին, եւ շատ մը

հողեր անջրդի ու խոպան մնացած են, մինչդեռ Եւրոպայի մէջ, մանաւանդ ի Պելժիա, Բամբինի գաւառին մէջ (Մէօզի եւ էսքոյի միջեւ) կառավարութեան ի գործ դրած ուռոգումները ճշմարիտ պարտէզ մը դարձուցած են այդ գաւառը: 25,000 էքղաւ տարածութեամբ անբեր հող մը կարելի եղած է մշակելի ընել, և ամէնէն ճոխ մշակութեանց գործածել օգտակարապէս:

ՓՈՒՄՇԱԿՈՒՄ [assolement]

Երկրագործութեան ծագումէն ի վեր, մարդիկ հասկցած են թէ միեւնոյն հողը, ո՛րքան ալ հարուստ ըլլայ, ո՛րքան ալ լաւ խնամուած ըլլայ, բաղմամբիւ տարիներ յաջորդաբար չի կրնար արտադրել միեւնոյն տեսակէ բոյսեր: Այս երեւոյթին պատճառը դիւրահասկնալի է: Մէն մի տեսակ բոյս, իր սննդեան համար, հողէն փոխ կ'առնէ մասնաւոր տարրեր որք միշտ միեւնոյնն են, այնպէս որ այս տարրները չուտով կ'սպառին, եթէ զանոնք երկարատեան թողունք միեւնոյն բոյսին տրամադրութեան տակ: Այս իրադնութիւնն է որ արդէն շատ դժուար է ի վեր երկրագործներուն թելադրած է մշակութիւնները փոփոխել միեւնոյն հողին վրայ, այսինքն շարունակ միեւնոյն բոյսը չմշակել, այլ փոխ աւ փոխ: Ահա այս փոփոխութիւնը կը կոչուի փոխմշակում (assolement): Փոխ մշակում կրնայ ի գործ դրուիլ մէկէն մինչեւ հինգ տարուան համար: Փոխմշակումը դիպուածաբար ի գործ չի դրուիր: Իւրաքանչիւր երկրի մէջ փորձառութիւնը ցոյց տուած է թէ ո՞ր բոյսերն իրարու յաջորդելու են և ի՞նչ կարգով: Ընդհանրապէս հոգ կը տարուի պակաս սպառիչ բոյսեր մշակել ա՛յն բոյսերուն տեղ որք չափազանց սպառիչ են, խորարմատ բոյսերուն տեղ ալ ա՛յնպիսի բոյսեր որոց արմատները մակերեւութական (երեսկուկ) են:

Ատենօք, երբ երկրագործութիւնն այսօրուան չափ զարգացած չէր, հողը յագնեցնելէ կը վախճային, մանաւանդ որ աղբերն ալ հազուադիւրէն: Ուստի ընդհանրապէս ընդունուած էր երկամեայ փոխմշակումը, և հետեւաբար ի՛նչ տարի հանդիստ կը թողէին արտը և մէկ տարի կը մշակէին: Բայց այսօր հողէն օգուտ քաղե-

լու եղանակը շատ աւելի աղէկ գիտեն մշակները: Հիմակ ընդունուած է եռամեայ փոխմշակումը. այսինքն նախ մէկ տարի հանգիստ (jachère) կուտան արտին, եւ յետոյ երեք տարի շարունակաբար կը մշակեն բոյսերուն տեսակները միայն փոխելով, եւ աղբերու միջոցաւ հողն ալ պարարտացնելով: Եւրոպիոյ մէջ կան տեղեր որ մինչեւ 4—5 տարի փոխմշակում ի գործ կը դնեն առանց հանգիստի:

Շարունակելի

ԼԵՕ ԹՈՒՍԹՈՅԻ ԿԱՐԺԻՔԸ

ԹՐԱՆՍՎԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎՐԱՅ

Մոսկուայի թերթերէն մէկուն. Ռուսի Լիսովի խմբագիրներէն մին շահեկան խօսակցութիւն մը ունեցած է Թուրքոյի հետ, զանազան խնդիրներու վրայ: Մեծանուն ռուս վիպասանը, որ սիանգաւայն մեծ մարդասէր մ'է, նախ իր առողջութեան վրայ խօսելով ըսեր է ժպտելով. «Վախճանը մատ է. բայց հանդարտութեամբ կը դիտեմ զայն, ինչպէս բոլոր անխուսափելի բաները»: Յետոյ խօսեր է իր աշխատութեան նոր ծրագրերուն վրայ, իր վերջին վէպին վրայ, Յարութիւնն: Այս գործ, ըսեր է մեծանուն մատենագիրը, կը պարունակէ մէկ քանին այն վարիչ դադափարներէն, որոցմով միտքս զբաղած է երկարատեանէ ի վեր: Ուղեցի անոր մէջ ներկայացնել սիրոյ զանազան տեսակները, զգայական սէրը, հեշտական սէրը, և դարձեալ ուրիշ սէր մը, աւելի վեհ ու վսեմ, որ կ'ազնուացնէ զմարդիկ, կը սրբազործէ, կը փրկէ զանոնք: Յարութիւնը ճիշտ այդ սէրը կը պարունակէ իր մէջ:»

Քօսակցութիւնն յետոյ եկաւ Թրանսվալի պատերազմին վրայ: Մերունոյն դէմքը խօսոյն ողբերգութեամբ, և իր աչքերը փողփողեցան ա՛յն տեսակ մը հուրով, որ անոնց սեփական են: «Չէք կրնար հաւատալ, գոչեց, թէ այդ պատերազմ նախ եւ առաջ ի՞նչ վիճակի մէջ ձգեց զիս: Օրհնեա՛լ ըլլայ

Աստուած . այժմ անցաւ . Առաւօտուն երբ լրագիրները ձեռքս կ'առնէի , ամէն անգամ կ'աթոգին կը բաղձայի կարգալ թէ Պօէրները յաղթած էին Անգլիացոյց : Այս պատերազմ մեր ժամանակի մեծագոյն յիմարութիւնն է : Ի՞նչպէս , բարձր քաղաքակրթութեամբ օժտեալ երկու ազգեր , Անգլիացիք և Հոլանտացիք , զիրար ընդհինջ ընեն : Անգլիա , որ իւր աղատ ազգի անուամբ կը պանծար , կը ջանայ ջախջախել փոքրիկ Ժողովուրդ մը որ ամենափոքր չարիք մը չէ ըրած իրեն : Անհաւատալի , անլուր բան է այս : Գիտէ՞ք , ի՞նչ բանի հետ կրնանք բաղդատել այս անմիտ յարձակումը . եթէ դուք ու ես , երկու ծերունիներ , յանկարծ Սլոբոդն (սլոբոդնայր մը) երթայինք և Յիկաններու (գնչու) պարին խառնուէինք , մէկդի թողլով ամբողջութեան ամէն զգացում , և այս նախճիրը , լաւ դիտեցէք , վրայ կուգայ Հա-Հէյի Գիտականատրհակներէն վերջ , որու մասին այնքան աղմուկ յարուցին : Թրանսլալի պատերազմը մեր ժամանակի մէկ նշանն է , բայց յոյժ վշտառիթ մէկ նշանը , որ ցոյց կուտայ թէ շահու կիւրքն է որ կ'իշխէ աշխարհի վրայ . . . » :

Ա Ն Տ Ա Բ Ո Ւ Ժ Ա Կ Ա Ն

ՀԱՐՔՈՒԽՆ ԴԷՄ

Գլխու հարբուխի (Coryza) և իջուածքի (Rhume) դէմ չատ մը դեղի տարադներ (Formule) կան : Աւասիկ նոր դարման մը , ընչախտի (եմֆի) ձեւին տակ , որ ընդհանրապէս կը յաջողի ձմեռը հարբուխին և ամառը տենդին դէմ :

Կրամ

Ասիս պոնիֆ	1
Ասիս սալիսիֆ	0.20
Սիւֆաք սր ֆիցից	0.20
Բուսր սր Պեմոուհ	3
Սու—Նիդրադ սր Պիսիւր	2
Քլորիդրուս սր ֆիցից	1

Փոքրիկ տուփով մը ձեռքի տակ ունե-

ցէք այս փոշին , և առաջին անգամ որ փռնդտաք , անմիջապէս պտղունց մը քաշեցէք քթախոտի պէս , և ամէն ժամ կըրկնեցէք մինչեւ բարւոքում : Միւսնոյն ատեն փորալ սր բողասի բլիթներ (բասդիլ) առէք : Հազուադէպ է որ մարդ այս դեղը գործածելով չյաղթէ հիւանդութեան , իր սկզբնաւորութեան մէջ իսկ :

ՔԻՉ ՍԸ ԽՆԴՈՒՔ

Գինով մը տատանելով ճամբան դացած միջոցին , անցորդի մը կը դարնուի .

— Է՞ , կը զոչէ մարդը նեղացած . չէ՞ք տեսներ կոր . . .

— Այո՛ , կը մամալ դինովը , կը տեսնեմ կոր , նոյն խիլ գոյգ կը տեսնեմ կոր , հետեւաբար . . .

— Հետեւաբար ի՞նչ :

— Ուղեցի երկուքին մէջտեղէն անցնիլ . . .

* * *

— Ա . Ա . , ընտրելի մը * * * Ժողովին , իր կնոջը կը կարգայ ճառ մը զոր պատրաստած է :

— Մտիկ կ'ընեն՞ կոր :

— Անշուշտ :

— Բայց անդադար կը յորանջես :

— Ապացոյցն է ահա թէ մտիկ կ'ընենմկոր :

* * *

Երկու վազեմի բարեկամներ իրարու կը հանդիպին տառն տարի բաժանումէ մը յետոյ :

— Է՛հ , իմ խեղճ սիրելի , այդ ի՞նչպէս փետրադարիկ եղեր ես :

— Կարելի է , կ'ըսէ միւսը , այսու հանդերձ քեզմէ շատ մաղ ունիմ :

— Չէ՛ , բնա՛ւ :

— Բայց , այո՛ :

— Լաւ , համբա՛նք :

* * *

Վարչութեան մը սրահին մէջ .

— Բայց , պարո՛ն , կ'ըսէ պաշտօնէին՝ հոն

սպասող բաղմամբ իւր անձերէն մէկը, քսան եւհինգ վայրկեանէ ի վեր կիւեին առջեւն եմ եւ տակաւին...

Պաշտօնեան պաղարիւնութեամբ.

— Ես ալ, պարոն, քսան տարիէ ի վեր կիւեին ետեւն եմ:

* * *

Ամբակում աղա կը պատմէ թէ անցեալ գիշեր յարձակման մը զոհ ըլլալով, մեծ սարսափի մը ենթակայ եղեր էր:

— Պաղարիւնութիւն չունի՞ս, կը հարցունեն իրեն:

— Փա՛ռք Աստուծոյ, պաղարիւնութիւն ունիմ, միայն թէ վտանգին անցնելէն ետքը կուգայ ինծի:

* * *

Պանդուկի մը դրասնեակին մէջ ճամբորդ մը՝ սպասաւորներէն մէկուն.

— Վաղը առտու ժամը մէկին կ'ուզեմ որ զիս արթնցունես:

— Ուրեմն պարոնը բարութիւնը պիտի ունենայ զանգալը հնչելու, եւ ես անմիջապէս վեր պիտի ելնեմ զինքը արթնցնելու:

* * *

— Մարիամ, ինծի անանի կուգայ որ այսօր սուրճս սովորականէն համով եփեր ես:

— Էփէնա՛ր, սխալմամբ իմն տուած ըլլալու եմ:

* * *

— Նայեցէ՛ք, Տիկին, սա ջերմոցին քովը նստող պարոնը ի՛նչպէս սոսկալի կերպով տգեղ է:

— Բայց, պարոն, ամուսինս է...

— Ա՛հ, Տիկին, ուրեմն որքան ճիշտ է սա առածը թէ ամէնէն տգեղ մարդիկն ամէնէն գեղեցիկ կիները ունին:

* * *

Հայրը. — Միտքդ բեր, զաւակս, որ աշխարհիս մէջ կան բաներ որ դրամէն աւելի կ'արժեն:

Տղան. — Դիտեմ... բայց դրամով է որ կրնանք զանոնք գնել:

* * *

Փողոցին մէջ անցորդ մը անգգուշութեամբ կ'նոջ մը ծայրայեղ կերպով խոշոր ստքին վրայ կը կոխէ:

— Յախաւե՛լ, անպիտա՛ն. կը դռնէ կիներ ահաւանքը կճրտելով:

— Ներեցէ՛ք, Տիկին, կը յարէ անցորդը, ոտքերն իդ այնքան մանր են որ չկրցայ նշմարել:

Կիներ, դէմքը պայծառացուցած, իր սիրալիլ ժպիտը կը թռցունէ:

* * *

Դեռ նոր Բարիկ հասած հայր եւ որդի Պուլվառին վրայ ժուռ կուգան:

— Դիրգորի՛կ, զգուշութի՛ւն, ժամացոյցդ չեղնեն չորթեն այս խուռն բազմութեան մէջ:

— Չէ՛, հայրիկ, մի՛ վախնար:

Եւ հայրը, տղուն դաս մը տալու համար, վարպետութեամբ ժամացոյցը գրպանէն կը վերցնէ ու կը հարցնէ յետոյ.

— Դիրգորի՛կ, ժամը քանի՞ն է:

Տղան ձեռքը բաճկոնակին գրպանը կը տանի եւ հոն չգտնելով ժամացոյցը՝ կ'սկսի յուսահատութեան աղաղակներ հանել:

— Հանգարտէ՛, հանգարտէ՛, կ'ըսէ հայրը, ես վերցուցի գրպանէդ:

Եւ երբ ձեռքը գրպանը կը տանի ետ տալու համար, կ'ապշի:

Ժամացոյցը չի կա՛ր:

Դրպանախոյզ մը իր կարգին չորթած էր անոր գրպանէն:

* * *

Չափրասածեան վաճառանոցի մը մէջ կ'ուզէ նոր տեսակ ջերմոց մը գնել:

— Շատ խնայողական է, կը բացատրէ իրեն վաճառակիսը, այս կերպ վառարանով մը ձեր ծախսած ածուխին կէսը միայն կը մնա՛ր:

— Շատ լաւ, ուրեմն երկու հատ առնեմ, այս կերպով ըսել է թէ բնաւ ածուխ պիտի չսպառեմ:

* * *

Մարտիրոսի և Նիսի մէջտեղ, պատկերհան
մը որ կը մրափէ կառախումբին մէկ ան-
կիւնը, իր կէս քունին մէջ սա խօսքը կ'իմա-
նայ, որ կը բացազանչէր ուղեւոր մը.

— Օ՛հ, ի՞նչ զմայլելի գիւղանկար:

— Իմ նկարածս է, կը գոչէ պատկեր-
հանը, աչքերը բանալով:

* *

Ծովեղերքը, Պ. Լ., Տիլին Բ.ին.

— Լուսանկարչութիւնը կը սիրէ՞ք:

— Կը պաշտե՞մ:

— Շինած պատկերներ ունի՞ք:

— Օ՛հ, ոչ, ես կը պաշտեմ ըսի, որով-
հետեւ ամուսինս ամբողջ օրը փակուած կը
մնայ պղտիկ մօր սենեակին մէջ.

Ս.

ԱՅԼԱՓՈԽԱԼ ԲԱՌԱՐԱՆ

Արիաստան. — Յանգերու հանք մը, աե-
սակով աղնիւ և ճոխ:

Ակնոց. — Աչքին դիմակը:

Անափօքութիւն. — Իրերուն դիմակ հագ-
ցնելու արուեստը:

Անգստանի. — Անկողմնակալ խմբագիր մը:

Անասելի. — Լրագրական ձախողուած մը:

Անսանի. — Լրագրական սնապարծու-
թիւնները:

Բամբասան. — Ուտեստ մը զոր կանայք
միայն կ'սպառեն:

Բարեբախտ. — Այն առաջնորդն որ լրագրի
հետ դարձ չունի:

Բարեհոգ. — Շատ ոսկի ունեցողին մե-
նաշնորհը:

Բարեկամութիւն. — Յաջողութեան մէջ կը
գտնես, ձախողութեան մէջ կը կորսնցնես:

Բացակայ. — Ճշմարտութիւն:

Բերան. — Երբեմն սրտի, իսկ հիմա չա-
հու թարգմանը:

Բանագողութիւն. — Կարգ մը գողներու
գրամագլուխը:

Բծիւ. — Դեղաբոյս մը որոյ տեսակը աա-
կաւ շառնալու վրայ է:

ՀԱՐՍԱՆԻՔ

Բերայի բարձր դասուն մէջ շաբթուս
ուշագրաւ դէպքն եղաւ երկու ազնուա-
սուն՝ ընտանիքներու խնամութիւնն, որ
համակրական մեծ ցոյցի մը առիթ ըն-
ծայեց:

Արամ պէյ Դարամանեան, որդի Յա-
րութիւն էֆ. Դարամանեանի, եւ Ազն.
Օրիորդ Միննի Հարէնց, դուստր Մագ-
սուտ էֆ. Հարէնցի, իրենց պսակագրու-
թեան առթիւ, որուն նախագահեց Ս.
Պատրիարք Հայրը, 600է աւելի հարս-
նեւորներու համակրալիւ շնորհաւորու-
թիւններն ընդունեցին Թողատեան Հաս-
տատութեան շքեղ դահլիճներուն մէջ:
Պոլսոյ բովանդակ բարձր դասն, ազգա-
յին թէ օտար, գրեթէ ամբողջութեամբ
ներկայ էր ինչան այն կաթողին հա-
մակրութեան, զոր նորապսակ ամուր,
իրենց ծաղիկ երիտասարդութեան մէջ
իսկ սիւսած էին ընկերութեան բարձր
ըջանակներուն մէջ, իրենց մտքի ու սրը-
տի բարձր մշակութեամբ եւ իրենց սե-
փական շնորհալի ձիրքերով:

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԷՐ

Յովակիմ էֆ. Մնտիկեան վեցամսուան
Հանրագիտակ նուիրեց Դասթամունիի Հայոց
վարժարանին, Կը յաւանք թէ աղնիւ նուի-
րատուն սոյն ինքնայորդոր ձեռնարկն իր
հետեւորդները պիտի ունենայ:

«ԻՏԷԱԼԻՆ ՀԱՍԱԾ»

Մեր նոր վէպը՝ որ գիրքի ձեւով պի-
տի սպուի, եթէ ոչ յաջորդ թիւով գէթ
մօտաւորով մը պիտի լոյս տեսնէ մեր
խոսման համաձայն: Այս յապաղմուն
սլացնաւ է, — ինչպէս սրամիտ ընթեր-
ցող կ'ըմբռնեն, — ձեռնհաս պաշտօնա-
սունէն առնուելիք հրամանագրին ձե-
ւակերպութիւնը:

Արտօնսկր. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

THE HISTORY OF THE

REIGN OF

CHARLES THE FIRST

IN THE

YEAR

1649

BY

JOHN BURNET

OF THE UNIVERSITY OF OXFORD

IN TWO VOLUMES

LONDON

Printed by J. Streater, at the Sign of the Gun, in St. Dunstons Church-yard, 1699.

ԳՐԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Դին 5 Ղրուռ

800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ունեւորու եւ ընթանակաւ ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը : Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը : 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղչ : Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի Տնօրէնութեան :

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱԺԵԱՆ

Դին 4 Ղրուռ

Լոյս տեսաւ Ն. Պերպրեան մատուր տպագրութեամբ, բաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն : Մայրաքաղաքիս է՛ն կարելու դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ :

Փետրեմբեր 1900ի տպագրուածը, որ 203 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատկերներով, դիտարկելի, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ու դաստիարակի :

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրապէս մեծաւաճակ առ 100 զեղչով :

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵ՛՛՛՛ ՄԷԻՑ

Կրէկուստ Ղազարօժ եւ Ընկ.

Պատիւ ունիմք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասըգիէ խան քիւ 1 եւ 2 : Եւրոպիոյ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէտքերով եւ միշտ պատրաստ ունի մեծաւաճակ, ինչպէս նաեւ շիտակեալ համալսական վայելող եւրոպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն շեսակ հանգային շուրերը : Գաւառներէ եղած յանձնարարութիւնք նշանակաւ փութով կը կատարուին, անմեղելի կերպիւ աժան գներով :

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք :

ԿԱՌԵԻՈՐ ԱԶԴ.— Հանրադիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են : Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան համար : Իսկ 50 տող մէկ անգամուան համար :

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան :

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

«Հանրագիտակ»ի վերաբերեալ ամէն գրութիւն պէ՛տք է ուղղել Նսան Պերպրեան տպարանը, Էսփի զապրիյէ հասէտի քիւ 61, առ Տնօրէնութիւն եւ Խմբագրութիւն «Հանրագիտակ»ի